# Արձանագրություն N 2

«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կողմից մարդատար ավտոբուսի ձեռքբերման նպատակով կազմված «ԵՐՋԷԿ-ԳՀԱՊՁԲ 25/17» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի

ք. Երևան

28.09.2017թ.
ժ. 10:00-ին

Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ՝ Գ. Եսայանը

Հանձնաժողովի անդամներ՝ Ս. Մուրադյանը

Յու. Ջավահիրյանը

Ե. Աբելյանը

Ա. Վարդանյանը

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Պետրոսյանը

Գնումների պլանով նախատեսված մարդատար ավտոբուսի համար գնման հայտով սահմանված՝ գինը կազմում է **14 000 000** ՀՀ դրամ:

***Նիստի օրակարգը***

1. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և հասցեները.
2. Տվյալներ՝ էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության և յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին:
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը:
4. Տվյալներ՝ առաջին և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ:
5. Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրը, օրը և ժամը:

***Հարց 1. Ընթացակարգին մասնակցելու նպատակով www.armeps.am համակարգի միջոցով էլեկտրոնային եղանակով հայտ ներկայացրած մասնակիցների անվանումը և հասցեն:***

| Հ/հ | Մասնակիցների անվանումները | հասցե |
|---|---|---|
| 1 | «Մուլտի Մոթորս» ՍՊԸ | ՀՀ Կոտայքի մարզ, գ. Առինջ, Երևան-Սևան մայրուղու աջակողմյան հատված |
| 2 | «Էյչ Գրուպ» ՍՊԸ | ք. Երևան, Բաշինջաղյան 1փ., 13/30 |

***Հարց 2. Տվյալներ՝ մասնակիցների ներկայացրած էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության և մասնակցի ներկայացրած***

***փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին:***

Ուսումնասիրելով մասնակիցների ներկայացրած հայտերը՝ Հանձնաժողովը

2.1 արձանագրեց, որ հայտերում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը:

2.2 պարզեց, որ մասնակիցների ներկայացրած փաստաթղթերը կազմված են հրավերի պահանջներին համապատասխան և որոշեց «Մուլտի Մոթորս» ՍՊ և «Էյչ Գրուպ» ՍՊ ընկերությունների հայտերը գնահատել բավարար՝ հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող:

**Կողմ 5, դեմ 0:**

***Հարց 3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը:***

3.1

| Հ/հ | Մասնակցի անվանումը | Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/ | ԱԱՀ** /տառերով և թվերով/ | Ընդհանուր գինը /տառերով և թվերով/ |
|---|---|---|---|---|
| 1 | «Մուլտի Մոթորս» ՍՊԸ | 11 625 000 (տասնմեկ միլիոն վեց հարյուր քսանհինգ հազար) | 2 325 000 (երկու միլիոն երեք հարյուր քսանհինգ հազար) | 13 950 000 (տասներեք միլիոն ինը հարյուր հիսուն հազար) |
| 2 | «Էյչ Գրուպ» ՍՊԸ | 12 075 000 (տասներկու միլիոն յոթանասունհինգ հազար) | 2 415 000 (երկու միլիոն չորս հարյուր տասնհինգ հազար) | 14 490 000 (տասնչորս միլիոն չորս հարյուր իննսուն հազար) |

3.2 «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացրած գնային առաջարկը գերազանցում է ձեռք բերվող ապրանքի համար գնման հայտով սահմանված գինը:

***Հարց 4. Տվյալներ՝ առաջին և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ:***

Հաշվի առնելով մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկները՝

***Հանձնաժողովը որոշեց***

- «Մուլտի Մոթորս» ՍՊԸ-ին ճանաչել որպես առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

**Կողմ 5, դեմ 0:**

***Հարց 5. Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրի, օրվա և ժամի մասին:***

- Հանձնաժողովը որոշեց հաջորդ նիստը նշանակել առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները քարտուղարի կողմից հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երկրորդ աշխատանքային օրը, ժամը 11:00-ին, ք. Երևան Արին Բերդի 3-րդ նրբանցք, թիվ 3 հասցեում:

**Կողմ 5, դեմ 0:**

*Հանձնաժողովը հանձնարարեց քարտուղար Ա. Պետրոսյանին՝*

• Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ-ի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 43-րդ կետի 3-րդ ենթակետով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղն զբաղեցրած մասնակից «Մուլտի Մոթորս» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ:

• Ղեկավարվելով Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով՝ էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցել առաջին տեղ զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ – *Սույն արձանագրության հետ միաժամանակ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին առաջարկվում է արձանագրությունն ստանալուց երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:*

Հանձնաժողովի նախագահ՝ Գ. Եսայան

Հանձնաժողովի անդամներ՝ Ս. Մուրադյանը

Յու. Ջավահիրյան

Ե. Աբելյան

Ա. Վարդանյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Պետրոսյան